ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 25 մայիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի

Ա. Խաչատրյանի

Քննության առնելով Արման Սահակյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Արման Սահակյանը 2017թ. մայիսի 10-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. *«ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ և 75-րդ հոդվածները»:*

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ.

1. Դիմողը նշում է, որ վիճարկվող նորմերում ամրագրված են դատավարական ժամկետների որոշման չափորոշիչները, համաձայն որոնց՝ վերջիններս որոշվում են օրացուցային ստույգ տարով, ամսով, ամսաթվով կամ որոշակի ժամանակահատվածով: Ընդ որում, բոլոր ժամկետներին տրված է ընդհանուր մոտեցում՝ դրանց սկսման և ավարտման մասով: Բացի դրանից, օրենսդիրն առանձնացրել է «աշխատանքային օր» եզրույթը, ինչը բացառում է ոչ աշխատանքային օրերին որևէ դատավարական գործողություն կատարելը:

Ըստ դիմողի՝ օրերով հաշվարկվող ժամկետների դեպքում խնդիրներ են առաջանում սուբյեկտների համար, քանի որ դրանց հոսքի մեջ ժամանակագրային առումով կարող են ընդգրկվել ոչ աշխատանքային օրեր, որոնք անհնարին են դարձնում համապատասխան վարքագծի դրսևորումը:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի ամրագրում «օրացուցային օր» եզրույթը, սակայն, փաստորեն, ժամկետները հաշվարկվում են այդ եզրույթի համատեքստում՝ իրավունքի հասցեատիրոջ համար առաջացնելով շփոթմունք և վարքագծի դրսևորման ոչ հստակություն:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ և 75-րդ հոդվածները որոշակի չեն այնքանով, որքանով չեն ամրագրում օրերով հաշվարկվող ժամկետների հաշվարկի ընթացքը, չեն ընդգծում դրա հաշվարկն «օրացուցային օր» եզրույթին համապատասխան կատարելը, կանխատեսելի չեն սուբյեկտի համար և չեն ապահովում իրավունքի սուբյեկտի և իրավակիրառողի միատեսակ ընկալումը:

2. Դիմումին կից ներկայացված դատական ակտերի, մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանում անմիջականորեն վկայակոչված չեն դիմողի կողմից վիճարկվող դրույթները:

Ի թիվս այլնի, անհատական դիմումին առաջադրվող սահմանադրական և օրենսդրական պահանջներից է նաև այն, որ անհատական դիմում կարող է ներկայացնել այն անձը, որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից **կիրառվել է** օրենքի դրույթ: ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով **«օրենքի դրույթի կիրառում»** հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանը բացահայտել է իր՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշման մեջ, մասնավորապես, արտահայտելով իրավական դիրքորոշում առ այն, որ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի՝ «...իր նկատմամբ **կիրառված** օրենքի դրույթի...» բառակապակցության մեջ **կիրառում** հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի կիրառում, երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցո-

ղական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի **կիրառում:**

Սահմանադրական դատարանի պրակտիկայում հանդիպել են նաև այնպիսի **իրավիճակներ,** երբ դատական ակտերում ուղղակիորեն վկայակոչված չի եղել դիմողի կողմից վիճարկվող դրույթը, սակայն դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է եղել դիմողի նկատմամբ իրավական հետևանքների առաջացումը դիմողի կողմից վիճարկվող, դատական ակտում անմիջականորեն չվկայակոչված նորմերով, **ինչպես խնդրո առարկա գործի պարագայում**: Հետևաբար, «օրենքի դրույթի» կիրառում է համարվում նաև այն դեպքը, երբ դատական ակտերում բացակայում է օրենքի դրույթի ցանկացած վկայակոչում, սակայն դատական ակտի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դիմողի համար իրավական հետևանքներ է առաջացրել չվկայակոչված դրույթի փաստացի կիրառումը:

3. Դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Արման Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ և 75-րդ հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

25 մայիսի 2017 թվականի
ՍԴԴԿՈ/2-12